

ԳԱՌՆԻԿ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՄՄ, ԵՊՀ, ԳՀՃ

ՀՈՎՃԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՅՈՒՂԱԶԱՐ ԲԱԲԵՐԴՅԻ († 1809) ՆԱԿԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՏԻՊ ԶԱՓԱԾՈ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՏԱՂԸ¹

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1903 թվականին՝ ուղիղ 120 տարի առաջ, երիտասարդ հայագետներ, այն ժամանակ Գեորգյան ճեմարանի դասախոսներ պատմաբան Հակոբ Մանանդյանը եւ լեզվաբան Հրաչյա Աճառյանը լույս ընծայեցին «Հայոց նոր վկաները» խորագրով ժողովածուի «գիտական» հրատարակությունը²: Գաղափարի հղացումն առնչվում է հայագիտության մեկ այլ վաստակավորի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանի (հայտնի նաեւ «Միաբան» մականունով)³ անվան հետ: Դրանից մեկ տարի առաջ՝ 1902-ին, երկու հատորով լույս էր տեսել ժողովածուի «ժողովրդական» հրատարակությունը (առանց բնագրային տարւթերցումների, ծանոթագրությունների, համապատասխան ցանկերի եւ այլն)՝ «Քրիստոնէութեան եւ Սբ. Էջմիածնի հաստատութեան 16-րդ եւ գրերի գիւտի 15-րդ դարդարձի առթիւ»⁴: 1903 թ. հրատարակության մեջ աշխատասիրողները հրատարակեցին 140 վկայաբանություն, որոնցից

¹* Ստացվել է՝ 18.07.2023, գրախոսվել է՝ 25.07.2023:

էլ. հասցե՝ garnik.haroutiounian@gmail.com: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (թեմայի ծածկագիր՝ 22YR-6D018):

² Տե՛ս Հայոց նոր վկաները (1155–1843), գիտական հրատ., բազմաթիւ ձեռագրերի համեմատությամբ, ընդարձակ տեղեկութիւններով եւ ծանօթագրութիւններով, ձեռագրերի, նահատակների, յատուկ անունների ու օտար բառերի մանրամասն ցուցակներով եւ ցանկերով, աշխատ.՝ Յ.Մանանդեանի եւ Հր. Աճառեանի, Վաղարշապատ, 1903 (այսուհետ՝ ՀՆՎ, 1903):

³ Հենց վերջինի խորհրդով երիտասարդ, բայց արդէն խոստումնալից գիտնականները ձեռնամուխ եղան նոր վկաներին նվիրված ժողովածուի կազմման աշխատանքներին: Այդ հանգամանքների մասին մանրամասները տե՛ս ՀՆՎ, 1903, Յառաջաբան, էջ I–II, նաեւ՝ Պ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Հայ մարտիրոսագրության ուղիներում, Հայոց նոր վկաները (1155–1843), գրաբարից թարգմ.՝ Գ.Թոսունյանի, Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 2015, էջ 5–7:

⁴ Տե՛ս Հայոց նոր վկաները (ժողովրդական հրատ.), հտ. Ա. (1155–1485), հտ. Բ. (1486–1843), կազմեցին Յ. Մանանդեան եւ Հր. Աճառեան, Վաղարշապատ, 1902:

45-ը մինչ այդ անտիպ էր. 26 արձակ վկայաբանություն, 17 վկայաբանական տաղ եւ 2 տապանագիր⁵:

Վկայաբանություններն ընդհանրապես արժեքավոր եւ հետաքրքիր են տարբեր գիտակարգերի հետազոտողների համար, եւ Հ. Մանանդյանի գնահատմամբ՝ «Նախ եւ առաջ վկայաբանական այս հատուածները խիստ թանկագին նիւթ են Հայոց եկեղեցական պատմութեան համար եւ միանգամայն վստահելի աղբիւր են, որովհետեւ ժամանակակիցների ձեռքով են գրուած...»⁶: Աշխատասիրողների սպասումները, սակայն, վկայաբանական նոր նյութերի հայտնաբերման ծավալի իմաստով, ավելին էին, քան արդյունքում դրանք ստացվեցին. «Իմ գլխաւոր նպատակն է եղել ծանօթանալ այնպիսի պատմական աղբիւրների, որոնց միջոցով հնարաւոր լինէր վաւերական փաստեր ունենալ Հայոց ներքին կեանքի մասին մահմետականների տիրապետութեան շրջանում: Պէտք է խոստովանիլ, որ մեր յոյսերն այդ տեսակէտից աւելի մեծ էին, եւ արդիւնքներն այնքան էլ գոհացուցիչ չեղան»⁷: Այնուամենայնիւ, նրանք իրավացիորեն ենթադրում էին, որ իրենց չհրատարակած բնագրերի պակասը մեծ մասամբ ԺԸ. եւ հաջորդ դարերից է լինելու⁸: Մեր սույն հրապարակումը փորձ է՝ լրացնելու այդ պակասը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՑԻ ՏԱՂԵՐԳՈՒԻ

ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԺԸ.–ԺԹ. դարերի նշանավոր հեղինակներից է Հովհաննես (անունը հանդիպում է նաեւ Հաննա, Հեննե ձեւերով) Կարնեցին (մոտ 1750–1820-ական թթ.)՝ տաղերգու, մանկավարժ, «նոտար», գրիչ, նաեւ՝ տիրացու, մահտեսի: Մինչեւ 1960-ական թվականները Հովհաննես Կարնեցու կյանքը, գործը եւ երկերը մանրամասն ուսումնասիրության առարկա չեն դարձել, երկերի մեծ մասն էլ անտիպ է եղել, թեեւ մի քանի հետազոտողներ՝ մասնավորապես Հր. Աճառյանը, ծանոթ են եղել այս հեղինակին եւ անդրադարձել նրա երկերին⁹: Առաջին անգամ Շուշանիկ Նա-

⁵ Տէս Պ. Հովհաննես ՅԱՆ, նշ. աշխ., էջ 7:

⁶ ՀնՎ, 1903, Յառաջաբան, էջ 1:

⁷ Անդ:

⁸ Տէս անդ, էջ XI:

⁹ Տէս Հովհաննես ԿԱՐՆԵՑԻ, Տաղարան, աշխատ.՝ Շ. Նազարյանի, Երեւան, 1962, էջ 5–6 (այսուհետ՝ Տաղարան):

զարյանն է մանրամասն անդրադարձ կատարել Հովհաննես Կարնեցու՝ «միջնադարյան հայ վերջին տաղերգուներից մեկի» կենսագրությանը, գրական ժառանգությանը եւ հրատարակել հեղինակի տաղերից ավելի քան երեք տասնյակը: Ակնհայտորեն նրա համար առաջնային էին Հովհաննես Կարնեցու աշխարհիկ բնույթի տաղերի հրատարակումը եւ ուսումնասիրությունը¹⁰, մինչդեռ հեղինակի հոգեւոր-կրոնական թեմաներով տաղերի մասին նա գրում է. «Անկյանք գաղափարներ ունենալու հետ մեկտեղ, տաղտուկ են, ծանրաշունչ եւ զուրկ սիրո երգերի համից ու հոտից»¹¹: Սա է թերեւս պատճառը, որ մեկ տարի անց՝ 1963 թվականին, Վիեննայի Մխիթարյան հայրերից Համազասպ Ոսկյանը «Հանդէս Ամսօրեայ»-ի էջերում հրատարակեց Հովհաննես Կարնեցու կյանքին ու երկերին նվիրված մի ծավալուն հոգված (որը Կարնեցու կենսագրությանը նոր փաստեր գրեթե չէր ավելացնում, սակայն ներառում էր մինչ այդ անտիպ բնագրեր)¹²: Նույն հոգվածը 1966-ին վերահրատարակվեց չորս հայ տաղասացներին նվիրված նրա գրքում¹³: Հայր Հ. Ոսկյանն իր աշխատանքում, հիմնվելով Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագրական հավաքածուի վրա, հրատարակել է մինչ այդ անտիպ՝ կրոնական բնույթի հինգ տաղ, սիրո մեկ տաղ, «ուրախութեան» մեկ տաղ, ինչպես նաեւ եւս 5 հինգ տաղ՝ նվիրված Ավետյաց երկրի սրբավայրերին (Սրբոց Հակոբյանց վանքին, Սբ. Հարություն տաճարին, Բեթղեհեմի Սբ. Ծննդյան տաճարին եւ այլն)¹⁴: Վերջինները գրական արժեքով գուցե իրոք զիջում են աշխարհիկ (սիրո) երգերին, սակայն առնվազն Երուսաղեմի սրբավայրերի տեղադրության կամ պատկանելության իմաստով, կարծում ենք, բավական մեծ կարեւորություն ունեն:

Հովհաննես Կարնեցու թողած գրական ժառանգությունը տպավորիչ է. հայտնի է նրա գրչին պատկանող շուրջ 130 տաղ (մեծ մասը՝ աշ-

¹⁰ Բնականաբար, դա կարող էր լինել խորհրդային շրջանի գաղափարական սահմանափակումներով պայմանավորված, չենք բացառում նաեւ՝ անձնական նախընտրություն պատճառով:

¹¹ Տաղարան, էջ 38:

¹² ՀԱՅՐ Հ. ՈՍԿԵԱՆ, Յովհաննէս Կարնեցի, ՀԱ, 1963, թիւ 7–9, էջ 339–358, թիւ 10–12, էջ 489–506:

¹³ Չորս հայ տաղասացներ եւ անոնց տաղերը. Յովհաննէս Կարնեցի, Գրիգոր արքեպ. Օշականցի, Մովսէս դպիր Կարնեցի եւ Մարտիրոս վ. Ղրիմեցի, գրեց եւ հրատ.՝ դկտ. հայր Համազասպ Ոսկեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1966, էջ 1–57: Մենք օգտվել ենք այս հրատարակությունից:

¹⁴ Տես անդ, էջ 13–53:

խարհիկ բնույթի), ինչպես նաև՝ հինգ պոեմ կամ վիպերգ, որոնցից չորսը՝ վկայաբանական¹⁵, մեկը՝ պատմական: Վերջինը, որը նվիրված է Կարին քաղաքը եւ շրջակայքը 1813 թ. պատուհասած սարսափելի սովին, հրատարակվել է (սակայն թերի) դեռևս 1884 թ.¹⁶:

Շ. Նազարյանի բնորոշմամբ՝ «Հովհ. Կարնեցին միջնադարյան հայ վկայաբանական գրականության վերջին դեմքերից մեկն է. այդ առումով նրա այդ պոեմները կարծես թե եզրափակում են վկայաբանական գրականության պատմությունը»¹⁷: Հ. Մանանդյանը եւ Հր. Աճառյանը «Հայոց նոր վկաները» ժողովածուում հրատարակել են հեղինակի հիշյալ չորս վկայաբանական պոեմներից երեքը¹⁸: Սրանցից բացի՝ Շ. Նազարյանը Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետ՝ Մատենադարան կամ ՄՄ) ձեռագրական հավաքածուում հայտնաբերել է Հովհաննես Կարնեցու հեղինակած եւս մեկ անտիպ «տաղ»՝ նվիրված Ղազար Բաբերդցի անունով մի երիտասարդ նահատակի: Նա նշել է այն ձեռագրերը, որոնցում ինքը գտել էր այս երկը, սակայն բնագիրը չի հրատարակել:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՑՈՒ՝ ՂԱԶԱՐ ԲԱԲԵՐԴՅԻ ՆՈՐ ՆԱՀԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՏԻՊ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Կարնեցու վկայաբանական բնույթի երկերի մասին Շ. Նազարյանն ավելի մեղմ է արտահայտվել, քան հոգեւոր տաղերի մասին՝ նշելով, որ դրանք «ուշագրավ են նաև որպես գեղարվեստական ստեղծագործություններ», որոնք «գաղափար են տալիս նաև այս մարդկանց անցած կյանքի առօրյայի, ծեսերի, զբաղմունքի, մտավոր

¹⁵ Չափածո (կամ տաղաչափված) վկայաբանությունների բնորոշման համար Շ. Նազարյանն իր նշյալ աշխատանքում տարբեր եզրեր է գործածել. «էպիկական պոեմ» (էջ 11) կամ ուղղակի «պոեմ», «վկայաբանական երգ» (էջ 11), «էպիկական երգ» (էջ 11) կամ ուղղակի «երգ», «վիպերգ» (էջ 11), «վկայաբանական տաղ» (էջ 14), «վկայաբանական պոեմ» (էջ 18): Նախընտրելի ենք համարում վերջինը՝ բնորոշելու համար Հովհաննես Կարնեցու՝ նոր վկաներին նվիրված ընդարձակ երգերը, որոնք անվանում ենք նաև պարզապես «չափածո վկայաբանություններ», իսկ «վկայաբանական տաղ»-ը կիրառել ենք հիմնականում այդ ընդարձակ երգերին հաջորդող, վկաներին փառաբանող ավելի փոքրածավալ երգ(եր)ի համար:

¹⁶ Պատմություն սովուն Կարնոյ (1813), Բազմավէպ հանդիսարան, հտ. ԽԲ., պր. Բ., ապրիլ-յունիս, 1884, էջ 118–122, տե՛ս նաև Տաղարան, էջ 16–17:

¹⁷ Անդ, էջ 21:

¹⁸ ՀնՎ, 1903, էջ 572–602, 620–674: Ի դեպ՝ Սահակ Մսեր Կարնեցու վկայաբանության առաջաբանում Հովհաննես Կարնեցին հիշատակել է եւս մեկ նոր վկայի՝ Պալի Կարնեցուն, ինչը եւս, որպես միակ աղբյուր նրա մասին, Հ. Մանանդյանը եւ Հր. Աճառյանը զետեղել են իրենց ժողովածուում. տե՛ս անդ, էջ 603–604:

զարգացման, մշակույթի վիճակի եւ այլ հարցերի մասին»¹⁹։ Ապա հավելում է. «Հովհ. Կարնեցու վկայաբանական վերոհիշյալ շորս պոեմներից իրենց բովանդակությամբ եւ արվեստով առավել ուշագրավ են Սահակ մանկանը եւ Վառվառ աղջկանը նվիրվածները։ Այս պատճառով էլ մենք անհրաժեշտ ենք համարում... փոքր-ինչ կանգ առնել այդ երկու պոեմների վրա»²⁰։ Թերեւս այս պատճառով էլ ուսումնասիրողը նպատահարմար չի համարել հրատարակել Ղազար Բաբերդցուն նվիրված վկայաբանական պոեմը, այլ մանրամասն անդրադարձել է հիշյալ երկու վկայաբանության դիպաշարին։

Կարծում ենք, սակայն, որ մի կողմից՝ Հովհաննես Կարնեցու վկայաբանական ժառանգության ամբողջացման, մյուս կողմից՝ Հ. Մանանդյանի ու Հր. Աճառյանի սկսած Հայոց նոր վկաներին նվիրված սկզբնաղբյուրների հավաքագրման, հրատարակման եւ ուսումնասիրության համատեքստում կարելու է նաեւ այս նահատակի վկայաբանության՝ գիտական շրջանառության մեջ դնելը²¹։ Ուստի հիմնվելով երկի՝ ՄՄ Հ^ր 9958, ինչպես նաեւ ՄՄ Հ^ր 8735 ձեռագրերում պահպանված բնագրերի վրա²²՝ որոշեցինք կազմել Ղազար Բաբերդցու վկայաբանության բնագիրը։ Այս անտիպ վկայաբանության մասին խոսելով՝ Նազարյանը հավելում է. «Պոեմի վերջում կցված է Հովհ. Կարնեցու նույն նահատակին նվիրված մի այլ տաղ (16 տող), որը նույնպես անտիպ է...»²³։ Նշյալ տաղը, որը եւս երկու ձեռագրերում էլ պահպանվել է, նույնպես հրատարակում ենք՝ դնելով վկայաբանական պոեմից անմիջապես հետո (հետեւելով ձեռագրային կառուցվածքին)։

Ի տարբերություն Սահակ Մըսր մանկան († 1778), Հարություն Կարնեցու († 1806), Գասպար Դվնիկցու (Կարնեցու), նրա քույր Վառվառի եւ Մարիամ Կարնեցու († 1810), որոնք ծագումով Կարինից (էրզրում) կամ հարակից գյուղերից էին, Ղազարը († 1809), ամենայն

¹⁹ Տաղարան, էջ 20–21։

²⁰ Անդ, էջ 21։

²¹ Կարինում ու շրջակայքում եւ առահասարակ Օսմանյան կայսրության տարածքում ԺԸ.–ԺԹ. դարերում նահատակություններին, դրանց պատճառներին ու լայն իմաստով պատմական համապատկեր, ինչպես նաեւ Հովհաննես Կարնեցու վկայաբանական երկերի առանձնահատկություններին առաջիկայում մանրամասն անդրադառնալու ենք առանձին հոդվածով։

²² Այս ձեռագրերում է Շ. Նազարյանը հայտնաբերել խնդրո առարկա երկը. տե՛ս անդ, էջ 13–14։

²³ Նույն տեղում, էջ 14։

հավանականությունը, Բաբերդ քաղաքից էր: Այն շուրջ 125 կմ է հեռու Կարինից, այստեղով էր անցնում մեծ կարեւորություն ունեցող՝ Տրապիզոնը Կարինին կապող ճանապարհը²⁴: Թեեւ Բաբերդ քաղաքի բնակչության կազմի մասին վիճակագրական ստույգ տվյալներ մեզ չեն հասել, սակայն 1800–1830-ական թվականների համար բերվում են հետեւյալ թվերը. 14 000 բնակիչ, որից 10 000-ը՝ հայ, հայերից բացի՝ քաղաքում ապրում էին նաեւ թուրքեր (որոնք մեծ մասամբ հայվրացական ծագում ունեին եւ աչքի էին ընկնում կոպիտ բարքերով ու խիստ թշնամական էին հատկապես հայերի նկատմամբ) եւ փոքր թվով հույներ, իսկ մինչեւ 1915 թ. քաղաքում կար հայկական հինգ եկեղեցի²⁵: Ցավոք, Ղազարի մասին, անգամ նրա նահատակության նույն տարում (1809 թ.) ժամանակակցի ստեղծած վկայաբանության առկայության պարագայում, կենսագրական տեղեկություններ գրեթե չունենք: Հովհաննես Կարնեցին երկի խորագրում նշում է, որ Ղազարի նահատակության մասին լուրը հասել է Կարին (այսինքն՝ ինքն անձամբ ականատես չի եղել այդ իրադարձությանը), եւ «յոմանց նահատակասէր անձանց» կողմից «հարկադրված»՝ ինքը ստեղծել է նրան նվիրված չափածո վկայաբանությունը²⁶: Սա, ի թիվս այլ հանգամանքների, ցույց է տալիս ժԹ. դարասկզբին հայկական միջավայրում՝ մասնավորապես Կարինում, վկայաբանությունների հանդեպ հետաքրքրությունը («պատվիրատուների» առկայությունը), ինչպես նաեւ հմուտ անձի (որպիսին էր վստահաբար «արդար վարժապետ» Հովհաննես Նոտարն այդ ժամանակ)՝ այդ գրական տեսակի երկերի շարադրումը, ձեւավորումը (նաեւ տաղի երաժշտության հորինումը կամ մշակումը²⁷): Ավելին. Հովհաննեսին դիմող «նահատակասէր» անձինք, ըստ ամենայնի, ակնկալել են հենց չափածո վկայաբանության ստեղծում, քանի որ մինչ այդ նա այդպիսի առնվազն երկու չափածո վկայաբանություն արդեն հեղինակել էր՝ Սահակ Կարնեցունը (ուղեկցող տաղով) եւ Հարություն Կարնեցունը:

²⁴ Տէս Թ. Խ. ՀԱՅՈՒԹՅԱՆ, ՍՏ. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱՆՇՅԱՆ, Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, Ա-Դ, Երեւան, 1986, էջ 527:

²⁵ Տէս նույն տեղում:

²⁶ Տէս ՄՄ 9958, 2ա:

²⁷ Խոսքը հատկապես չափածո վկայաբանությանը հաջորդող վկայաբանական տաղերի մասին է, որոնց դեպքում Կարնեցին հիմնականում նշել է, թե ըստ ինչ «գոյն»-ի, այսինքն՝ արդեն գոյություն ունեցող որ երգի եղանակով պետք է երգվեին:

Ղազար Բաբերդցուն նվիրված վկայաբանությունը (100 տող) ծավալի առումով Հովհաննեսի պոեմներից ամենափոքրն է ու թերեւս համեմատելի է Հարություն Կարնեցու վկայաբանության (172 տող) հետ, որը Հովհաննես Կարնեցին գրել էր նրանից երեք տարի առաջ: Մյուս երկու վկայաբանական պոեմները ծավալուն վիպերգեր են՝ բաժանված առանձին մասերի՝ համապատասխան ենթախորագրերով եւ այլն²⁸: Ի տարբերություն, սակայն, Հարություն Կարնեցու, որի մասին մեզ տեղեկություններ են հասել նաեւ այլ աղբյուրներից, Ղազարի մասին այդպիսիք մեզ հայտնի չեն, իսկ Հովհաննես Կարնեցին, ի տարբերություն Հարություն Կարնեցուն նվիրված երկի, բնավ չի խոսում Ղազարի ծագման, մասնագիտության կամ կյանքին վերաբերող հանգամանքների մասին, անգամ մանրամասն չի խոսում Ղազարի նահատակության հանգամանքների մասին: Սա հավանաբար կարելի է բացատրել նրանով, որ Ղազարն ուրիշ քաղաքից էր, եւ նրա մասին տեղեկությունները սահմանափակվում էին վկայաբանության պատվիրատուների բանավոր հաղորդումով:

Հովհաննես Կարնեցին Ղազար Բաբերդցուն նվիրված իր վկայաբանությունն սկսում է նահատակների (մարտիրոսների կամ վկաների) սխրանքի, դրա դրդապատճառների, նրանց տանջանքների մասին խոսելով, որոնք սկիզբ են առել դեռեւս Ստեփանոսից (իմա՝ Նախավկա) եւ հասել մինչեւ իր «դարը»: Եւ, ըստ Կարնեցու, հենց նրանց շավիղներին հետեւելով՝ իր օրերում եւս բազմաթիվ վկաներ եղան, որոնցից շատերի մասին Կարնեցին ինքը տեղյակ չէ: Ապա պատմում է, որ հավատարիմ մարդիկ լուր են տարածել Բաբերդ քաղաքում ունեցող Ղազարի նահատակության մասին: Վերջինս «ընտիր ազգէ» էր ծագում, աստվածասեր ծնողների զավակ էր, արի, բարի վարք ու համբավ ուներ: Ապա Ղազարը, տեսակին հատուկ ոճով ու սկզբունքներով, համեմատվում է այլ սրբերի (կամ աստվածաշնչյան կերպարների)՝ հինկտակարանյան Հոբի հետ, որի դեմ եւս սատանան թակարդ էր լարել (վկայաբանական տաղում արդեն Ղազարը համեմատվում է նորկտակարանյան Ղազարոսի²⁹ հետ, որի անվանակիցն էր նոր վկան): Հովհաննես Կարնեցին չի

²⁸ Դրանց դիպաշարին ու գրական առանձնահատկություններին մանրամասն անդրադարձել է Շ. Նազարյանը. տես Տաղարան, էջ 24–35:

²⁹ «Էր Ղազարոս Տեառն Յիսուսի սիրելի». ՄՄ 9958, Տա: Ավետարաններում երկու Ղազարոսի մասին է հիշատակվում: Այստեղ խոսքը Հիսուսի «բարեկամ» Ղազարոսի մասին է,

հաղորդում Ղազարի զբաղմունքի կամ մասնագիտության մասին, նրան ուղղակի երիտասարդ է կոչում: Այնուհետև պատմվում է Ղազարի դեմ հյուսված զրպարտանքի բուն առիթի մասին, որի շատ հանգամանքներ այդպես անհայտ են մնում ընթերցողի համար. մի վավաշոտ մոլլա³⁰, շնանալով ոմն կնոջ հետ, բռնվում է ոստիկանների կողմից եւ սպասվող տանջանքների սպառնալիքի տակ զրպարտում է Ղազարին սուտ մատնությանմբ, թե միասին են կատարել արարքը: Արդյունքում Ղազարին եւս ձերբակալում են ու տանում ատյան՝ խոստանալով շտանջել, պահպանել կյանքը, ավելին՝ խոստանալով հարստություն, եթե ուրանա իր կրոնը: Պատումից պարզ չէ, թե որտեղից է մոլլան ճանաչել Ղազարին, եւ մատնությունն առհասարակ հանգամանալից չի ներկայացված, ինչը թերեւս պետք է վերագրել Հովհաննես Կարնեցուն՝ բոլոր մանրամասներին չտիրապետելուն: Երանելին, սակայն, չկարողանալով լռել, հայտարարում է, որ ամուր է իր հավատքի մեջ եւ պատրաստ տանջվելու, քանի որ չի վախենում տանջանքներից: Այդ լսելով՝ հավաքված ամբոխն սկսում է գանահարել Ղազարին, եւ նույն պահին վճիռ է կայացվում կախել նրան կամրջից: Հաջորդած հորդորները՝ հրաժարվել քրիստոնեությունից, եւս չեն ազդում երիտասարդի որոշման վրա, որը, «ի սէր Փրկչին գոլով վառեալ»³¹, նախընտրում է բարի անունն ու նահատակությունը: Նահատակությանը հաջորդում է հրաշք՝ գիշերը լույս է իջնում եւ շրջապատում վկայի մարմինը, որը տեսնում են «գիշերապահ»-ները: Լուրը տարածվում է, ծնողները եւ հավատացյալները (քրիստոնյաները) ուրախանում են լուրից, հիվանդները գալով բժշկվում են ախտերից: Իսկ տեղի «իշխանները» (իմա՝ հայ մեծամեծները) միաբանվելով գնում են ոստիկանների մոտ եւ թույլտվություն ստանում իջեցնելու վկայի մարմինը կախաղանից: Քահանաները, ըստ պատշաճի, հուղարկավորում են նահատակի մարմինը, եւ «Սուրբ Շիրիմի» վրա դրանից հետո եւս լույս է իջնում, «եւ զայլ բազում հրաշս ցուցեալ»³²: Ապա Հովհաննես Կարնեցին գովերգում է Բաբերդը, ապա՝ «տոհմ Հայկեան»՝ Ղազարի պես ընտիր այր ծնվելու համար, նաեւ երանելի ծնողներին, որոնց նահատակված որդին

որը հետագայում հարություն առավ Հիսուս Քրիստոսի շնորհիվ. մանրամասն տե՛ս Հովհ. ԺԱ. 1–34:

³⁰ Բնագրում՝ «Այր ոմն մոլի վավաշոտեալ, / ընդ կնոջ միոյ շնութին անկեալ... իսկոյն մոլին այն ուրացեալ, / եւ զըժոխոց բաժին եղեալ». ՄՄ 9958, 4ա:

³¹ Անդ, 5ա:

³² Անդ:

այնուհետ առ Աստված բարեխոս էր դարձել: Հովհաննեսը վերջում նաեւ նշում է, թե ինչպես է տեղեկացել Ղազարի նահատակության մասին.

«Կարնեցի արք ոմանք անդ լեալ,
զկատարումն Սրբոյս տեսեալ,
եւ եկեալ աստ զորպէսն պատմեալ,
զբանս յօրինել ըզմեզ հարկեալ»³³:

Պոեմին հաջորդող վկայաբանական տաղը (16 տող), որում Ղազարն անվանվում է «նոր նահատակ վերջին դարոյս»³⁴, փաստական որեւէ նոր տվյալ չի հաղորդում վերջինի կամ նրա նահատակության հանգամանքների մասին, այլ բանաստեղծորեն վերապատմում է պոեմում հիշված կարեւոր անցքերը:

ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ինչպես վերը նշվեց, խնդրո առարկա բնագրի կազմման համար հիմք են ծառայել Մատենադարանի վերոնշյալ երկու գրչագրերը.

ՄՄ Հ^{մր} 9958, 2ա–8ա (=Ա): Յովհաննէս Կարնեցի, Նահատակութիւն Ղազար երիտասարդին ի Բաբերդ: 1809 թ.: Կարին: Գրիչ՝ հեղինակը: Թերթ՝ 8: Թուղթ: 15,6×10,8: Միասյուն: Նոտրգիր: Տող՝ 16: Կազմ՝ լս: Հշտկրն գրչի՝ 2ա³⁵:

ՄՄ Հ^{մր} 8735, 53ա–58ա (=Բ): Ժողովածու: ԺԹ. դ. (1809-ից հետո): Թերթ՝ 76: Թուղթ: 15×9,9: Միասյուն: Նոտրգիր: Տող՝ 16–25: Կազմ՝ ստվա-րաթուղթ: Հշտկրն հեղինակի՝ 58ա եւ այլուր³⁶:

Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակի կազմողները ՄՄ Հ^{մր} 9958 գրչագիրը, որը բովանդակում է միայն խնդրո առարկա երկը, ի թիվս մի քանի տասնյակ այլ ձեռագրերի, համարում են Հովհաննես Կարնեցու ինքնագիրը³⁷՝ հեղինակված Կարինում 1809 թ.: Ուստի Ղազար

³³ Անդ, 6բ:

³⁴ Անդ, 7բ:

³⁵ Տես Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Բ., կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթյան, ցանկերը եւ համեմ. տախտակները՝ Օ. Եգանյան, խմբ.՝ Լ. Խաչիկյան, Ա. Մնացականյան, Երեւան, 1970, էջ 1021:

³⁶ Ձեռագրի նկարագրությունը տես անդ, էջ 803–804:

³⁷ Ակնհայտ որեւէ փաստ չունենալով հանդերձ, կարծում ենք, հաշվի առնելով դրանց մեծ քանակը, Հովհաննես Կարնեցու ինքնագիրը համարվող բազմաթիվ ձեռագրերի շարքում կարող են լինել նաեւ ոչ այդպիսիք. մասնավորապես երբ ուրիշ գրիչը կարող էր չթողնել իր հիշատակարանը, այլ արտագրել միայն Հովհաննեսինը (այս պատկերն է նաեւ խնդրո

Բաբերդցուն նվիրված չափածո վկայաբանության բնագիրը կազմել ենք՝ հիմք ընդունելով այս ձեռագիրը, համեմատելով նաեւ ՄՄ Հ^մ 8735 ձեռագրի (ընդօրինակված ժԹ. դարում՝ 1809-ից հետո) հետ: Տառասխալների, վրիպակների եւ նման դեպքերում նախընտրելի ենք համարել բնագրում արտացոլել Բ. ձեռագրի տարբերակը:

Տարընթերցումները, ինչպես նաեւ տոմարական ծածկագրված տվյալները եւ բնագրերում գործածված «օտարազգի» մի քանի բառերի բացատրությունը տվել ենք տողատակում³⁸. վերջինի համար օգտվել ենք «Հայոց նոր վկաները»-ի համապատասխան բառարանից³⁹ (քանի որ խնդրո առարկա բոլոր բառերն այնտեղ արդեն ընդգրկված էին): Պոեմի եւ տաղի բնագրում հեղինակի՝ կարմիրով գրված խորագրերը, սկզբնատողերը եւ սկզբնատառերը կամ բառերը նշել ենք շեղով՝ ընթերցողի համար ավելի ակնառու դարձնելու նրա կազմած ծայրակապերը: Բացի այդ՝ հեղինակի (գրչի)՝ մեծատառով գրված բառերը եւս հիմնականում թողել ենք անփոփոխ, որոշ բառեր էլ մեծատառ դարձնելով՝ ըստ հարկի, ինչպես նաեւ միօրինակ ենք դարձրել նույն բառի՝ առանձին կամ միասին գրելաձևեր:

Ինչպես նկատել են նախորդ ուսումնասիրողները, Հովհաննես Կարնեցին ծայրակապով իր անունը «ծածկագրելու» սովորություն է ունեցել՝ հիմնականում իր ստեղծագործությունների տների սկզբնատառերով: Ծավալուն երկերի դեպքում նա անգամ ամբողջ նախադասություններ է ձեւակերպել: Այս հանգամանքն իհարկե նպաստում է ստեղծագործության հեղինակի հեշտ նույնականացմանը՝ անգամ նրա հիշատակարանի կամ խորագրում նրա անվան բացակայության պարագայում: Գասպար Բաբերդցի նահատակի՝ 100 տողից բաղկացած վկայաբանության դեպքում էլ տների սկզբնատառերը, ըստ Շ. Նազարյանի, հոգում են՝ «Ի Հաննէ Նօտարէ ասացեալ է բանս ի պատիւ նոր նահատակիս»⁴⁰: Սակայն ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ծայրակապը հետեւյալն է. «Ի Հէննէ Նօտարէ ասացեալ է բանս ի պատիւ սուրբ նահատա-

առարկա գրչագրում): Դրանցից յուրաքանչյուրի՝ նրա ձեռքով գրված լինելը հաստատելը ձեռագրագիտական առանձին ծավալուն ուսումնասիրություն է ենթադրում, ինչը դուրս է սույն աշխատանքի նպատակներից:

³⁸ Հոգվածի «Բնագրեր» բաժնում բնագրի տարընթերցում չհանդիսացող մեր ծանոթությունները նշել ենք շեղատառ:

³⁹ Տե՛ս ՀՆՎ, 1903, էջ 781–795:

⁴⁰ Տաղարան, էջ 14:

կիս»⁴¹։ Համոզված ենք՝ ճիշտ է մեր առաջարկած ընթերցումը։ 16 տողից (4 քառատող) կազմված վկայաբանական տաղի տների առաջին եւ երրորդ տողերի սկզբնատառերը եւս հոդում են հեղինակի անունը՝ «Ի Հէննէէս»⁴² կամ «Ի Հաննէէս»⁴³։ Ինչպես իր մյուս երկերում, այստեղ էլ Հովհաննեսը ծածկագրել է պոեմի եւ տաղի գրման թվականը՝ համապատասխանաբար «մեծ բառ» եւ «էպանծ» բառերի տառերի թվային համարժեքների կիրառմամբ⁴⁴։

ԲՆԱԳՐԵՐ

Ստորեւ ներկայացնում ենք Ղազար Բաբերդցուն նվիրված չափածո վկայաբանությունը (պոեմը) եւ տաղը՝ ըստ Մատենադարանի վերոնշյալ ձեռագրերի բնագրերի։

|Ձա| Ի Բաբերթ փաղափոջ Ղազար անուն ոմն երիտասարդ նահատակեալ
1258⁴⁵ թուջ, լուրն հասեալ աստ՝ ի Կարին, եւ յովանց նահատակասէր անձանց
հարկադրեցեալ եւ ըստ այնմ լոյ յարմարեալ եղեւ բանս յովեմնէ Նօտարէ.

Ի յաստուածուստ՝ յերկիր արկեալ,
հուր իւր սիրոյն գերազանցեալ,
որով վկայքն սիրավառեալ,
ի սէր Փրկչին՝ տիր բորբոքեալ։

Հըզօրաբար արիացեալ,
եւ ի մրցմունս մենամարտեալ,
զաշխարհային փառսըն⁴⁶ ատեալ,
անանց փառացըն փափաքեալ։
|Զբ| Եին զպատուէրն առնկալեալ,
զիւր անցայինսըն յետ թողեալ,
զխաչն յուս ինքեանց սիրով բարձեալ,
զկնի նորուն առհետեւեալ։

⁴¹ Տէս ՄՄ 9958, 2ա-7ա։

⁴² Տէս անդ, 7բ-8ա։

⁴³ Տէս ՄՄ 8735, 58ա։

⁴⁴ Հաշվարկը ներկայացրել ենք բնագրի համապատասխան տեղում։

⁴⁵ Բ.-ում՝ ՌՄԳ. (= ՌՄԾԼ°, Գ-ն՝ ԾԼ°.-ի վրա հետագայում սեւով ավելացրած)։

⁴⁶ Բ.-ում՝ փառսն։

Նախատանաց ընդդիմացեալ,
 ողորջանաց ոչինչ լուեալ,
 բռնակալաց հանդէպ կացեալ,
 յըսպառնալեաց նոցին չերկեալ⁴⁷:

Նոցունց զպարգեւան ոչինչ վարկեալ,
 խոստացելոցն ոչ հաւանեալ,
 զպէս պէս տանջանսն յանձն առեալ,
 զանձինս ի մահ տալ յօժարեալ:

Է յայտնապէս եւ ճիշդ⁴⁸ գըրեալ⁴⁹,
 խստամբեր վիշտս որ այնք կրեալ,
 յՍտեփաննոսէ⁵⁰ մինչ զայս հասեալ,
 զորպիսութիւն տանջմանցն պատմեալ:

|Յա| Նոցունց շաւղացըն հետեւեալ,
 նոր վկայքն որ դարուս եղեալ,
 բազմացն որ չեմք վերահասեալ,
 այլ այնց, որ եմք տեղեկացեալ:

Օժանդակ ինձ օգնիչ առեալ,
 զմաղթանք Սրբոցն հաճոյացեալ,
 'ւ⁵¹ ի Սուրբ Հոգին ապաւինեալ⁵²,
 որ ի ձիրսն է առատացեալ⁵³:

Տաւաճական լուր իմն հնչեալ,
 հաւատարմաց այն իսկ պատմեալ,
 զի ի քաղաքն Բաբերթ կոչեալ,
 Ղազար ոմն անդ նահատակեալ:

⁴⁷ Ա.-ում՝ չերկալ:

⁴⁸ Բ.-ում՝ ճիշտ:

⁴⁹ Բ.-ում՝ գրեալ:

⁵⁰ Բ.-ում՝ յՍտեփաննոսի:

⁵¹ Բ.-ում՝ եւ:

⁵² Ա.-ում՝ պաւինեալ:

⁵³ Բ.-ում՝ ապա վիպել վստահացեալ չի/ս որ ի ձիրսն է առատացեալ:

Այն իսկ ընտիր⁵⁴ ազգէ սերեալ,
յաստուածասէր ծնողաց ծնեալ,
բարի վարուք նա զարգացեալ,
արիութեամբ տիր քաջացեալ:

|Յբ| Ռամից մանկանց ազնիւ ցուցեալ,
համբաւ բարի առ ըստացեալ,
համայնից աչքն⁵⁵ ի նա հայեալ,
կէսք [հ]մանցեալք⁵⁶ եւ այլք՝ սիրեալ:

Էին շնորհիւնն փայլեցեալ⁵⁷,
տեսլեամբ պայծառ գեղեցկացեալ,
հանճարունակ ճարտար գտեալ,
մեծահաւատ բարեպաշտեալ:

Առ որ սատանն թակարթ արկեալ,
եւ իբր Յոբայ ցանցըս եդեալ,
փորձութիւն իմն վեր յարուցեալ,
ըզնա գթել⁵⁸ տիր ջանացեալ:

Սակայն Տէր մեր զնա ոչ թողեալ,
յօգնել նմա նախախնամեալ,
շնորհիւն ըզնա զօրացուցեալ,
արիութեամբ քաջացուցեալ:

|4ա| Այր ոմն մոլի վավաշոտեալ,
ընդ կնոջ միոյ շնութիւն անկեալ,
որ եւ զապիթք⁵⁹ ըզնա կալեալ,
եւ ի տանջել առ պատրաստեալ:

⁵⁴ Ա.-ում՝ ընտի:

⁵⁵ Բ.-ում՝ աչք:

⁵⁶ Բ.-ում՝ մանացեալքն:

⁵⁷ Ա.-ում՝ փայլեցեալ:

⁵⁸ Բ.-ում՝ գթէք:

⁵⁹ Արաբ.՝ ոստիկան, ոստիկանություն:

Ցասմամբ ի նա ըսպառնացեալ,
 եւ ըսպանման վճիռ հատեալ,
 իսկոյն մոլին այն ուրացեալ,
 եւ դըժոխոց⁶⁰ բաժին եղեալ:

Եւ յետ այնք⁶¹ չարէն դրդեալ,
 եւ մատնութեամբ զըրաբանեալ⁶²,
 թէ՛ Ղազարն ինձ էր ընկերացեալ,
 ի միասին եմք զայն գործեալ:

Առ ժամայն փոյթ զնա եւս կալեալ,
 եւ գանելով յատեան տարեալ,
 զխիստ չարչարանս տալ ասացեալ՝
 Թէ ուրանաս՝ լինիս զերծեալ:

|4բ| Լուր մեզ, ասեն, դու հնազանդեալ,
 փառօք⁶³ մեծութիւն լեր ըստացեալ,
 գանձիւք բազմօք հարըստացեալ,
 եւ մի զկեանսդ⁶⁴ կորուստ վատնեալ:

Էրանելին⁶⁵ արին ընտրեալ,
 այնք⁶⁶ լըռել⁶⁷ ոչ կարացեալ՝
 Չեմ ես, ասէ, զոր դուք կարծեալ,
 այլ յիմ⁶⁸ հաւատս եմ⁶⁹ ամրացեալ:

⁶⁰ Բ.-ում՝ դժոխոց:

⁶¹ Բ.-ում՝ այնր:

⁶² Բ.-ում՝ զրաբանեալ:

⁶³ Բ.-ում՝ փառօք:

⁶⁴ Բ.-ում՝ ըզկեանսդ:

⁶⁵ Բ.-ում՝ էրանելի:

⁶⁶ Բ.-ում՝ յայնմ:

⁶⁷ Բ.-ում՝ լռել:

⁶⁸ Բ.-ում՝ իմ:

⁶⁹ Բ.-ում՝ իմ:

Բիւր տանջանք թէ ունիք ինձ տալ,
 թէ փառք, պատիւ խազնայ⁷⁰ եւ մալ⁷¹,
 ի տանջանաց չունիմ վախնալ,
 'ւ⁷² ոչ մեծութեան պատուոյ ցանկալ:

Անդամօր որք լեալ են բազմեալ,
 բորբոքեալ են, ցասմամբ⁷³ լըցեալ,
 գանիւ հարմամբ խուռն արձակեալ,
 բրօք բռամբ կռփահակեալ⁷⁴:

|5ա| Նոյնում ժամու վճիռ հատեալ,
 ի կարմունջէն կախել տարեալ,
 եւ անդ եւըս զնա յորդորեալ⁷⁵,
 թողուլ զհաւատն՝ լինիլ փըրկեալ⁷⁶:

Սակայն արին՝ յոյժ քաջացեալ,
 զի ի սէր Փրկչին գոլով վառեալ,
 կամաւ զանձն իւր ի մահ տըլեալ⁷⁷,
 բարի անուամբ⁷⁸ նահատակեալ:

Իսկ ծնօղքն եւ ազգքն⁷⁹ հեռուստ կացեալ,
 զուարճախառն ողբով լացեալ,
 աղօթելով անդ գոհացեալ,
 նահատակմանն ուրախացեալ:

Պայծառ դիմօք գեղեցկացեալ,
 կախարանին նա փայլեցեալ,

⁷⁰ Արաբ.՝ զանձ:

⁷¹ Արաբ.՝ ապրանք, ինչք:

⁷² Բ.-ում՝ եւ:

⁷³ Բ.-ում՝ ցայսմամբ:

⁷⁴ Ա.-ում՝ կռփահակեալ:

⁷⁵ Ա.-ում՝ յորդորեալ:

⁷⁶ Բ.-ում՝ փրկեալ:

⁷⁷ Բ.-ում՝ տըլեալ:

⁷⁸ Բ.-ում՝ անվամբ:

⁷⁹ Բ.-ում՝ ազգն:

ի գիշերին լոյս մեծ իջեալ,
շուրջ զմարմնովն շրջապատեալ:

|5բ| Առ որ գիշերապահք հասեալ,
յայտնի հրաշն այն աչօք տեսեալ,
ընթացեալ առ ծնօղսն պատմեալ,
եւ համայնից հրատարակեալ⁸⁰:

Տրամայրզգեաց ծնօղքն լուեալ,
ազգ եւ երամք զայս իմացեալ,
հաւատացեալք վերահասեալ,
համայնքն եղեն յոյժ բերկրեցեալ:

Ի բերանոց բազմաց ելեալ,
փառք, գոհութիւն առ Տէր հանեալ,
որ զվկայն⁸¹ իւր պանծացուցեալ,
լուսով երկնից զնա պսակեալ:

Իիւծեալ հիւանդք որք են անդ լեալ,
եւ ախտաժէտք բազում դիպեալ,
առ այն յուսով իսկ փութացեալ,
յախտից ցաւոց են բուժեցեալ:

|6ա| Սուրբ վկայիս սիրովն լըցեալ,
իշխանք տեղւոյն⁸² միաբանեալ,
ի զապիթէն հրաման առեալ,
ըզՍուրբ Մարմինն վար⁸³ իջուցեալ:

⁸⁰ Բ.-ում՝ հրապարակեալ:

⁸¹ Բ.-ում՝ վկայն:

⁸² Բ.-ում՝ տեղոյն:

⁸³ Բ.-ում՝ վար:

Նոր ցնծութեամբ զուարճացեալ,
Քահանայքըն⁸⁴ մաքրապարեալ,
ուխտի մանկամբ⁸⁵ զգեստաւորեալ,
պայծառազարդ յառաջ անկեալ:

Անուշահոտ խնկաւորեալ,
մոմեղինօք ջահաւորեալ,
սաղմոսանըւզ⁸⁶ երգաբանեալ,
Սուրբ շարականս քաղցրաձայնեալ:

Հըրաշափառ⁸⁷ թաղումն առեալ,
զմարմինն Սուրբ Շիրմի եղեալ,
հետըզհետէ⁸⁸ եւս լոյս իջեալ,
եւ զայլ բազում հրաշս ցուցեալ:

|6բ| Արդ դու՝ Բաբերթ բարեհուշակեալ⁸⁹,
արքայաշէնդ⁹⁰ լեր ցնծացեալ,
զի ի⁹¹ Ղազարն որ ի քեզ ծընեալ,
քաջութեամբ արդ նահատակեալ:

Տոհմ Հայկեան⁹², որք անդ կայք բնակեալ,
ընդ ձեզ եւ⁹³ մեք լիցուք հրճուեալ,
զի այրն ընտիր, բարեպաշտեալ,
վասն հաւատոյ մարտիրոսեալ:

⁸⁴ Բ.-ում՝ Փահանայքն:

⁸⁵ Ա.-ում՝ մանկանք:

⁸⁶ Բ.-ում՝ սաղմոսանըւզ:

⁸⁷ Բ.-ում՝ Հրաշափառ:

⁸⁸ Բ.-ում՝ հետզհետէ:

⁸⁹ Բ.-ում՝ բարի հոշակեալ:

⁹⁰ Ա.-ում՝ արքայշէնդ:

⁹¹ Բ.-ում՝ չիք ի:

⁹² Բ.-ում՝ Հայկիան:

⁹³ Բ.-ում՝ եւ ձեզ փխ ձեզ եւ:

Այլ եւ ծնողքն են երանեալ,
ի յԱստուծոյ յոյժ սիրեցեալ,
զի որդին իւրեանց նահատակեալ,
եւ առ Աստուած բարեխօս լեալ:

Կարնեցի արք ոմանք անդ լեալ,
զկատարումն Սրբոյս⁹⁴ տեսեալ,
եւ եկեալ աստ զորպէսն պատմեալ,
զբանս յօրինել ըզմեզ⁹⁵ հարկեալ:

|7ա| Իսկ մեք սիրոյ Սրբոյս ստիպեալ,
ըստ հարկեցմանն զվէպս⁹⁶ յարմարեալ,
եւ զինչ ինչ բանս առ զարդ յօղեալ,
զոնէ հայցմանցն լինիմ օգտեալ:

Սոյնոյ բանիս շարօղն յետնեալ,
նախատառից լինի յայտնեալ,
(մեծ բառ⁹⁷) թւոյս բանս այս եղեալ,
յընթերցողացդ յիշել խնդրեալ:

7բ Տաղ ողբաձայն (ի գոյն⁹⁸ «Իշիթտիմ⁹⁹ քի նազլի եարւմ քէֆսիգաւը»¹⁰⁰)
յարմարեալ ի վերայ նոր նախատակին Ղազարու, որ ի Բաբերթ փաղաֆն
կատարեցաւ

Ի սէր Փրկչին բորբոքեցար՝ վառելով. (կրկ.)¹⁰¹
զսէր կենցաղոյս մերժեալ ի բաց մոռացար,

⁹⁴ Բ.-ում՝ Սրբոյն:

⁹⁵ Բ.-ում՝ զմեզ:

⁹⁶ Բ.-ում՝ զվիպս:

⁹⁷ «Մեծ բառ»-ի թվային համարժեքը՝ $200+5+50+2+1+1000=1258+551=1809$:

⁹⁸ Բ.-ում՝ + որ ասէ:

⁹⁹ Բ.-ում՝ Իշիթտիմ:

¹⁰⁰ Թրգմ.՝ «Ես լսեցի, որ նազելի սիրելիս տխուր է»: Շնորհակալ ենք Մատենադարանի ավագ գիտաշխատող Աննա Օհանջանյանին՝ հաշատառ թուրքերեն երգի/տաղի խորագրի թարգմանություն, ինչպես նաեւ բնագրի կազմման հետ կապված օգտակար խորհուրդների ու դիտարկումների համար. վերջինի համար՝ նաեւ Մատենադարանի գիտաշխատող Օվսաննա Խաչատրյանին:

¹⁰¹ Ձեռագրում՝ առանց փակագծի:

Հաւատով իսկ հաստատագոյն զինելով, (կրկ.)
ի յաշխարհի անուն բարի ըստացար:

Խոջանկացեալ¹⁰² զմահն ոչինչ վարկելով,
կեանքդ անցաւոր անանց կենաց փոխելով,
Նոր նահատակ վերջին դարոյս լինելով,
Ներ Բաբերթու վարդի նման դու բացար¹⁰³:

Նշուլափայլ¹⁰⁴ յերկնից պսակ¹⁰⁵ ցուացեալ,
կախարան քոյ¹⁰⁶ լուսով եղեւ զարդարեալ,
Էկօլֆն ի քեզ ցաւոց բուժումն ընկալեալ,
հրաշագործ սքանչելեօքդ¹⁰⁷ որ¹⁰⁸ ցուցար:

|8ա| Էր Ղազարոս Տեառն Յիսուսի սիրելի,
եւ դու նմա անուանակիր¹⁰⁹ բաղձալի,
Սոյն թիւս (էպանծ¹¹⁰)¹¹¹ երգս ի սէր քո յարմարի,
արիդ Ղազար նահատակեալ պանծացար¹¹²:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ Հովհաննէս Կարնեցուն՝ մինչ այժմ անտիպ չափածո եւս մեկ վկայաբանության հրատարակությունը, հուսով ենք, կնպաստի ԺՀ.-ԺԹ. դարերի վկայաբանական գրականության մասին ավելի լավ պատկերացում կազմելուն եւ նրա հետագա հետազոտությանը: Սրա-

¹⁰² Բ.-ում՝ Արիացեալ:

¹⁰³ Բ.-ում՝ Մէջ այդ Բաբերթ ֆաղաֆոջ դու վարդ բուսեալ փիս Ներ Բաբերթու վարդի նման դու բացար:

¹⁰⁴ Բ.-ում՝ Նշուլաշող:

¹⁰⁵ Ա.-ում՝ յերկնից պսակ: Զեռագրում՝ պսակ յերկնից՝ գրչի ձեռքով բառերի վերելում համապատասխանաբար ավելացված՝ 2, 1: Բ.-ում՝ պսակ յերկնից:

¹⁰⁶ Բ.-ում՝ քո:

¹⁰⁷ Ա.-ում՝ հրաշագործ սքանչելեօքդ: Զեռագրում՝ սքանչելեօք հրաշագործ՝ գրչի ձեռքով բառերի վերելում համապատասխանաբար ավելացված՝ 2, 1: Բ.-ում՝ սքանչելիօք հրաշագործ:

¹⁰⁸ Բ.-ում՝ որ:

¹⁰⁹ Ա.-ում՝ անուանակիր:

¹¹⁰ «Էպանծ»-ի թվային համարժեքը՝ $7+800+1+400+50=1258+551=1809$:

¹¹¹ Բ չիք թիւս (էպանծ)

¹¹² Բ վերջին փառատողն ավելացված 58ա էջի ստորին լուսանցում, հետագայի ձեռնով շղագրով: Թ. 58–9ի միջև ձեռագրում ամենայն հավանականությամբ էջ(եր) են պակասում:

նով ամբողջացվում է նաեւ Հովհաննես Կարնեցու վկայաբանական գործերի հրատարակությունը: Ղազար Բաբերդցի նոր նահատակին նվիրված այս վկայաբանությունը եւ տաղը, կարծում ենք, կարող են հետաքրքրել ինչպես աստվածաբաններին, կրոնագետներին ու պատմաբաններին, այնպես էլ բանասերներին՝ ավելի լավ պատկերացում տալով ԺՀ. դարի վերջերի եւ ԺԹ. դարակսզբի լեզվի, գրականության առանձնահատկությունների մասին:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հովհաննես Կարնեցի, Նոտար, Ղազար Բաբերդցի, Բաբերդ, նոր վկա, նահատակ, վկայաբանություն, չափածո, պոեմ, տաղ:

РЕЗЮМЕ

В литературном наследии известного армянского поэта, педагога и писца Ованнеса Карнеци (ок. 1750—1820) отдельную группу составляют его мартирологические сочинения, посвященные армянским мученикам Османской империи своего времени. Три из них были опубликованы еще в 1902 и 1903 гг. в монументальном сборнике “Новые армянские мученики”, составленном Акобом Манандяном и Грачьею Ачаряном. В своей монографии, посвященной Ованнесу Карнеци, литературовед Шушаник Назарян, упоминая еще об одной такой стихотворной мартирологии, посвященной мученику Казару (Лазарь) Бабердци († 1809), к сожалению, не опубликовала этот текст.

Целью данной публикации прежде всего является завершение издания мартирологического наследия Ованнеса Карнеци, тем самым представляя вниманию научного сообщества эту стихотворную мартирологию. К тому же это и небольшой шаг в деле продолжения работы, начатой А. Манандяном и Г. Ачаряном по изданию и исследованию неопубликованных мартирологий. Текст мартирологии Казара Бабердци мы составили на основе автографической рукописи Матенадарана 9958 (Карин, 1809 г.), которая нами была сопоставлена с дошедшим до нас текстом рукописи Матенадарана 8735 (XIX в., после 1809 г.).

К сожалению, сообщаемые автором биографические данные о Казаре Бабердци скудны. В мартирологии также ничего не говорится о некоторых обстоятельствах мученичества этого «нового страстотерпца». Известно лишь время событий – 1809 г., место – город Баберд, откуда и Казар был родом. Ованнес Карнеци воспевает его мученический подвиг также в посвященном ему акафисту, которая размещена после поэмы.

SUMMARY

In the literary heritage of the prominent Armenian hymnographer, pedagogue, and scribe of the 18th – 19th cc., Hovhannes Karnetsi (of Karin, c. 1750–1820), martyrological works dedicated to the Armenians martyred in the Ottoman Empire during his lifetime form a separate group. Three of these were published in 1902 and 1903 in the monumental collection “Armenian New Martyrs” compiled by Hakob Manandyan and Hrachya Acharyan. In her book dedicated to Hovhannes Karnetsi, philologist Shushanik Nazaryan mentioned another martyrological poem dedicated to the martyr Ghazar of Baberd or Baberdtsi († 1809), but did not publish its text.

The current publication first aims to complete the publication of the martyrological heritage of Hovhannes Karnetsi, introducing this versified martyrology to academic circles. This is also a little step towards the continuation of the initiative started by H. Manandyan and H. Acharyan, aiming publication and study of unpublished martyrological texts. The text of the martyrology of Ghazar of Baberd was prepared based on the text preserved in the MS 9958 (written in Karin in 1809) of the Matenadaran, considered to be an autograph. We have compared this text with the one in the MS 8735 (XIX c., after 1809) of the Matenadaran.

Unfortunately, Hovhannes Karnetsi has not provided many biographical details about Ghazar of Baberd. In the versified martyrology, some circumstances concerning the martyrdom of this “new martyr” remain unclear. We know the date of the events – 1809, the place – city of Baberd, from where Ghazar originated. The act of bravery of this martyr was praised by Hovhannes Karnetsi also in the martyrological hymn that follows the poem.

